## ԳԼՈՒԽ ԽԸ
### *ԽԱՆԻ ԱՐՇԱՎԸ ՕՍՄԱՆՅԻՆԵՐԻ ՎՐԱ*

Խանը եկավ Վրաստանից և լսեց այն վնասների մասին, որ օսմանցիք արին Արարատյան դաշտի նկատմամբ: Նա փղձկուն սրտով հոգոց էր հանում և մռնչում էր իբրև առյուծ: Ապա հրամայեց զինվորներ առնել հայերից՝ այսինքն՝ հրացանավորներ: Եվ հավաքվեցին ավելի քան վաթսուն մարդ՝ Եղվարդից, Քանաքեռից, Երևանից, Նորագավթից, Էջմիածնից, Օշականից, Աշտարակից, Կարբիից, Օհանավանից, ընտիր այրեր, հրազենի գործի մեջ հմուտ: Սրանց և իր զորքերը առավ, ելավ գնաց Արագածի հյուսիսային կողմը և բանակեց այնտեղ: Զորապետ նշանակեց Մուրադ բեկին, որի մասին նախապես հիշատակեցինք: Հրամայեց (Մուրադ բեկին) գնալ հանդիպել օսմանական զորքին, որ խմբված էին Շիրակ գավառում Արփա[108] գետի ափին: Ոմանք քնած էին, ոմանք լողանում էին, ոմանք ձիերն էին կերակրում և այդպես անհոգ էին: Իսկ Մուրադ բեկը ելավ մի բլուրի վրա և օսմանցիներին ձայն տվեց: Իսկ օսմանցիք շտապ վեր կացան, շուտափույթ հեծան ձիերը և բլրի մյուս կողմից թափվեցին պարսից զորքի վրա: Պարսիկները տեսնելով նրանց՝ փախան, գնացին դեպի խանը: Իսկ խանը նստած ինչ-որ տեղում տասներկու մարդով գինի էր խմում. հայոց հրացանավորները գտնվում էին նրա շուրջը: Լսելով Մուրադ բեկի փախուստի մասին՝ շտապով վեր կացավ, (խանը) հագավ երկաթյա զրահը, որ կոչվում է գեյիմ, սաղավարտ դրեց գլուխը, կռնապանը հագցրեց թևը, այդպես ամրացրեց իրեն ամենայն պատրաստությամբ: Պատերազմական գործի համար ուներ նետերով լիքը կապարճներ և թուր, որ կոչում էին զիլֆղար*, լախտ, նիզակ, արծաթյա վահան թիկունքին: Այդպես հագցրել էր նաև ձին, որ կոչվում էր Ղազի Գհեր, կշտապանակ, սրտապանակ, չկար տեղ, որ ծածկված չլիներ: Այսպես զինված մղվեց թշնամու դեմ: Մուրադ բեկը փախուստով հասավ խանի մոտ, իսկ խանը բարկացավ նրա վրա և ասաց. «Ով սև էշ, քո ազգի հանդեպ դեռ սեր ես տածում» և

* Նույնն է՝ ինչպես մեր Հավլունի թուրը, զիլղար Մուհամեդի փեսա Ալու Թրի անունն է:





նիզակով հարվածեց նրա գլխին և ասաց՝ դարձիր, որ գնանք: Եվ գնացին, հանդիպեցին օսմանական զորքին: Օսմանցիների զորապետն էր մի ոմն, որին կոչում էին Ղալալի, որ առաջ էր եկել, ասաց. խանին խան է պետք, պարոնին՝ պարոն, ծառային՝ ծառա: «Արդ՝ ո՞վ է խանը, թող մոտ գա, որ տեսնենք»: Իսկ խանը առաջ գալով ասաց՝ ես եմ խանը, եթե բան ունես ասելու, ասա: Իսկ Ղալալին նայեց, տեսավ խանին, որ ոչ մի բաց տեղ չուներ, բացի բերանից, և գեղարդը, որ ձեռքում բռնած էր, զարկեց խանի բերանին և վերին շրթունքը պատռեց: Խանը մտրակեց ձին և հանեց զիլֆղար թուրը և վրա բերեց ձախ ուսին՝ խոտորնակի կտրեց մինչ ծիծը և կտրեց աջ թևն ու գլուխը կախ մնաց մի կողմում, իսկ ձախ թևը մյուս կողմում: Երբ օսմանցիք տեսան, թե ընկավ իրենց առաջնորդը, փախուստի մատնվեցին: Պարսիկները պատերազմի փող հնչեցրին, իսկ օսմանցիների ձիերը անվարժ էին փողերի ձայնին, խրտնեցին ու փախան: Պարսիկները օսմանցիներին քշեցին մինչև Կարսի դուռը: Արեգակը մուտք գործեց, գիշերը օթևանեցին Կարսի դռանը: Հաջորդ օրը սփռվեցին երկրում, գերեցին ում գտան և վերադարձան Երևան՝ իրենց հետ տանելով բազմաթիվ օսմանցիներ:

Այս պատմությունը սովորեցինք Ղարիբ անունով մի էջմիածնեցի մուղդուսուց Օհանավանի անապատում, որ ասում էր, թե ես էլ էի հրացանավոր: Իսկ առաջին պատմությունը լսեցի Հակոբ անունով մենակյացից Սաղմոսավանքի անապատում: Նա Եղվարդ գյուղից էր և ինքն էլ գերի էր ընկել օսմանցիների ձեռքում: